է կանգնած։ Ո՞ր հայը իր մարդկային մասնաւոր զբաղումներով, գիտենալով, որ թիւրքաց Հայաստանի ազատութեան և զարգացման համար ամենից առաջ անհրաժեշտ է լուսաւորութիւնը, կրթութիւնը, կը խնայէ իր լուման այդպիսի մարդասէր և պատմական մեծ նշանակութիւն ունեցող գործի համար։ Ուրաքանչիւր հայ, որ զբաղուելով է իր հայրենիքի, իր ազգային օրօրոցի պատիւը և ապագան, ուրեմն և իր սեփական պատիւը, սրբական պարտք պէտք է համարի անդադար օգնել այն ընկերութիւններին և ազգային գործի այն առաջնորդներին, որոնց գործունէութիւնը նուիրված է հայ ազգի առաջադիմութեանը և աջողութեանը։

Ինչպէս յայտնի է, հայ ամբոխի մէջ կրթութիւն ծաւալող գործիչները ոչ թէ միայն ուսումնարաններն են, այլ գլխաւորապէս գրականութիւնը։ Գրականութեան մի ճիւղը, լրագրութիւնը գործում է իբրև ազգային լուսաւորութեան պահապան, իբրև հասարակական կարծիքը արտայայտող, իբրև ժողովրդական ձայն, որ ամեն տեղ լսվում է և, զարթեցնելով հարցեր ազգային պէտքերի մասին, ստիպում է ամենքին խոնարհվել իր առաջ, իր ազդեցութեան առաջ, որ լի է հասարակական գիտակցութեամբ և հեղինակութեամբ։

Հայերը պարտաւորված պէտք է ունենան իրանց ձայնը քաղաքական շրջանների մէջ և գա պէտք է լինի հայ պարբերական մամուլը։ Սրանից մի քանի տարի առաջ, ինչպէս վերև ասացինք, թէ Ռուսաստանի և թէ այլ երկիրների մէջ շատ քիչ գիտէին հայ լրագիրների գոյութեան մասին։ Բայց այժմ հայկական մամուլի ձայնը ամեն տեղ լսվում է, հայ լրագիրների յօդուածները և լուրերը առատ նիւթ են տալիս ռուսաց և եւրոպական լրագիրներին։

Այս հանգամանքն էլ մեծ պատիւ է բերում հայերին։ Բայց տարաբաղդաբար հայ լրագիրների վիճակը նիւթական կողմից ապահոված չէ և եթէ հայ խմբագիրները ինքնազոհութիւն չը գործէին՝ ոչ մի հայ լրագիր կովկասի մէջ հաստատ և ապահով գոյութիւն չէր կարող ունենալ։ Քանի որ այլ ազգութիւնների լրագիրները մեծ եկամուտներ են տալիս իրանց հրատարակողներին, հայ լրագիրների խմբագիրները իրանց վաստակը տասնեակ հազարներով են հաշուում։

Եթէ հայերը կամենում են պահպանել իրանց անուան պատիւը, թող նրանք համակրութեամբ և զորձով օգնեն հայոց պարբերական հրատարակութիւններին։

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունվարի 28-ին

Ս. Պետերբուրգում բացի հայ ուսանողների ընկերութիւնից և ժողովից, կայ նաև մի այլ ընկերութիւն, որի անդամները բաղկանում են Թիֆլիսից նորեկ հայ և վրացի երիտասարդներից։ Վերջիններս՝ յօգուտ իւրեանց չքաւոր ընկերակիցների, յունվարի 25-ին, պ. Կոնոնովի տանը, թատրոնական ներկայացումներ տուին վրաց և հայոց լեզուով։ Խաղացին վրացերէն՝ պ. Ցագարելի հեղինակ. կոմեդիա երեք արարողութեամբ՝ «Ժամանակներն այժմ փոխված են», իսկ հայերէն—«Դա էլ քի մոցիքլութիւն» վոդեվիլը՝ Տէր-Գրիգորեանցի։

Երկու պիեսներն էլ շատ յաջողակ կերպով կատարվեցան։ Այսպէս օրինակ, վրացերէն կոմեդիայի առաջին արարողութեան մէջ երբ բեմ են դուրս գալիս լոթի կինտոները, նրանց ուրախ ձայն ու աղաղակը, կոնծարանութիւնը, կենաց բաժակները հնարեալ խօսքերով, խմենք այն լապտերի կենացը, որ գիշերով լուսաւորում է մեր ճանապարհը և այլն և այլն, կատարեալ գաղափար են տալիս Թիֆլիսի ստորին դասի ժողովրդեան բարք ու վարքի մասին։ Լաւ էին նոյնպէս առանձին տեսարանները, ինչպէս զօր. Գիժուայի (Անդրոնիկով) յանդգնութիւնը և վէճը իշխան Զաքարիա-շվիլի։—(Ռազիկով) հետ, դրանց կռիւը, բարեկամների միջամուխ լինելը խաղաղութիւն հաստատելու համար։ Կուի պատճառն այն էր, որ իշխանը փախցրել էր օրիորդ Թասիային, որ Գիժուայի մտերիմ բարեկամ Սաքօյի հարսն էր համարվում։ Զայրացած կինտոներն մաքարելով Զաքարիա-շվիլու բռնութեան դէմ, կամենում են հասկացնել նրան, որ այժմ ժամանակները ուրիշ են և թէ մի որ և իցէ իշխան անտեսման իրաւունք չունի իր ստորադրեալների վրա։ Ոչ աղաչանք, ոչ սպառնալիք, ոչինչ չէ կարողանում համոզել իշխանին օրիորդի վրա դարձուցանելու համար նորա փեսացուին։ Նա իր յամառութիւնը այն տեղն է հասցնում, որ կամենում է ամուսնանալ աղջկայ հետ, միայն որ իր կամքը գլուխ բերէ։ Եւ երբ բռնաւորը պատրաստվում է արդէն հարսի հետ ննկեղեցի գնալու պսակի, դրան մօտ նորան հանդիպում են Սաքօն և Գիժուան իրանց ընկերներով։ Օգուտ քաղելով տեղի ունեցած աղմուկ ու շփոթից, Սաքօն խլում է իշխանի ձեռքից իր սիրուհուն և անհետանում է։

Վրաց ներկայացման մասնակցեցան մի քանի հայ երիտասարդներ և օրիորդներ։ Դերասաններից հանդիսականների ծափահարութեան արժանացան պ. պ. Անդրոնիկով (Գիժուա), Ալիբէգով (Սաքօ), Կիպրիանէ (Աւետիք) Միրզայեանց (Պիչխուլ), օրիորդ Նիկոլաձէ (Կատինա), օրիորդ Տէր-Աստուածատուրեանց (Օրոմսէ), Միրզոյեանց (Արտէմ Իվանիչ) և այլն։ Կոմեդիայում տեղի ունեցած երգերն և պարերը շատ նպաստեցին վրաց ներկայացման և կենդանութիւն տուին դրան։

Անկեղծ ուրախութեամբ նուիրում եմ մի քանի խօսք հայոց վոդեվիլի կատարման։

60 ամեայ հարուստ ծերունի Կարապետի դերը շատ գեղեցիկ կերպով խաղաց պ. Լիսիցեանցը։ Նայելով հանդիսականների խորին ուշադրութեան, ես վստահութեամբ կարող եմ ասել, որ դերասանի ոչ մի խօսքը, ոչ մի շարժումն իզուր չանցաւ. բազմիցս պարոնը բուռն ծափահարութիւնից հարկադրված էր լինում ընդհատել իր դերը, որպէս զի լուութիւնը կրկին հաստատվի։ Իսկ երբ բեմի վրա երևեցաւ չնորհագեղ օրիորդ Սոֆիա Թամամշեանց Կարապետի կնոջ՝ Կէկելի դերում, հասարակաց ուրախութեան չափն անցաւ. միաձայն և շարունակ bravo, bis, բացականչումները չէին թողլ տալիս օրիորդին, սկզբում, մի բառ արտասանելու։

Վերջապէս, երբ ընդհանուր ոգևորութիւնը փոքր ինչ հանդարտվեցաւ, տաղանդաւոր օրիորդը իր գրաւիչ խաղով ցոյց տուաւ, թէ նա միանգամայն արժանի էր այն համակրութեան, որ վայելեց մինչև վոդեվիլի վերջանալը։ Պարտք եմ համարում նկատել, որ օր. Թամամշեանց, երեք տարի անընդհատ մասնակցելով հայոց ներկայացումներին, մեծագոյն ծառայութիւն է մատուցանում դրամատով իր հայրենակից չքաւոր ուսանողներին։ Փառք և պարծանք պարտաճանաչ օրիորդին։

Ցանկալի կը լինէր, որ մեր գաւառական քոյրերն էլ, խորտակելով ասիական նախապաշարմունքի շղթաները, նոյն լրջմտութեամբ աջակցէին տեղացի երիտասարդների բարի ձեռնարկութեանց. այսպէս միայն գեղեցիկ սեռը կատարած կը լինէր իր բարձր կոչումն և կը բռնէր իրան վայելուչ տեղը հայ հասարակութեան մէջ։ Ժամանակ է, վերջապէս, հնութեան փոշու հետ, թօթափել մեզնից արևելեան գարշելի բռնաւորութեան ազդեցութիւնը։ Դիտեմ, որ իմ հարեւանցի նկատողութեանս, մեր մի քանի grande dame ձևացող աղջիկ պարոնները ահաճութեամբ պիտի ասեն, fi donc! что за неумѣстная мораль. բայց այսպիսիների վրա ես կարող եմ միայն ցաւել։ Ցեսնենք, ով յաղթող կը հանդիսանայ, անձնական սնափառութիւնը թէ ժամանակը, որ ամենայն ինչ ծառայեցնում է իր պահանջներին։

Շարունակում եմ հաչիւներս թատրոնի վերաբերութեամբ։

Պ. Միրզոյեանցը մոցիքուլ Խայի դերում բաւականին հմտութիւն ցոյց տուաւ. շատերը նորա մէջ դերասանական քանքար են նշմարում. չէ կարելի նրանց հետ չը համաձայնվել։ Պ. Զարկարեանցը յաջողութեամբ կատարեց Նիկոլի դերը՝ պարոնը ապագայում կարող է լաւ jeune premier լինել։

Օրիորդ Ասլամազեանցի դերը այնքան չնչին էր, որ դժուար է նորա խաղի մասին մի որոշ գաղափար կազմել։

Ցառայ Կիրակոսի դերը թէև նշանաւոր էր, սակայն անփորձ պ. Լենֆիաճեանցը ոչինչ չը կարողացաւ ստեղծել դերանից և պահանջել էլ աւելորդ է, յայտնի բան է։ Միայն գովելի է պարոնի նպատակը, որ է—օգնել իր ընկերներին ըստ կարողութեան չափ։

Երբ վարագույրը իջաւ, զմայլված հանդիսականները չորս, հինգ անգամ կոչելով օրիորդ Թամամշեանցին, Լիսիցեանցին, Միրզոյեանցին և Զարկարեանցին առատօրէն վարձատրեցին նոցա ծափահարութիւններով, որոնցից թնդում էր ահագին դահլիճը։

Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ մի շատ շքեղ և զուարճալի պարահանդէս, ուր ի միջի այլոց, թէ հայերը թէ վրացիք, և թէ մահմետական զինուորականներ, մոռանալով միանգամայն իրանց ցեղական ծագումը և խտիր դաւանութիւնը լեզգինկա պարեցին. իսկ հասարակութիւնը այս միջոցին ծափահարում էր նոցա։ Ամեն անգամ երբ պիտի լեզգինկա սկսվի, հանդիսականները կազմում են դահլիճում մի մեծ շրջան աթոռներից, և դոցա ետևից կանգնած նայում են պարողների վրա, որոնք մինը սիւսի ետևից, իր հերթին, հանդէս է գուրս գալիս շրջանի մէջ տեղը։ Շրջան կազմող աթոռների վրա նստած են լինում կանայք և օրիորդներ, վասն զի իբրև թողլ էակներ նոքա չեն կարողանում մօտենալ շրջանին, որի չորս կողմում, ինչպէս ասացի, անքակտելի շղթայով կանգնած են լինում տղամարդիկ։ Պարողը հայ լինէր, թէ վրացի և թէ մահմետական ոչ ոք չէր հարցնում և ամենքը ծափահարում էին։ Ծիծաղ, ժպիտ, ուրախութեան անվերջ ձայներ հասարակաց էին։ Կողմնակի զննողը պիտի զարմանար այն համերաշխութեան վրա, որ թագաւորում էր այս երեկոյի խառնիճաղանճ բազմութեան մէջ։ Այստեղ, կարծես, չը կային ոչ հայ, ոչ վրացի, ոչ մահմետական և ոչ էլ կաթոլիկ. դրանք մի երկրի զաւակներ էին, դրանք կովկասցիք էին, որոնցից հասարակ հայրենիքի հեռաւորութիւնը ի մի ժողովուրդ էր ձուլել։

Օրինակելի համերաշխութիւն։ Առաւօտեան ե-

կը լինի հասկացողութիւն կազմել այդու վրա (ինչ տեղ է գտնվում, որքան տարածութիւն ունի, ինչ արժի...)

2) Երկրորդ սիւնի մէջ նշանակվում է թէ՝ ինչ մշտական պարտականութիւններ կամ սահմանափակութիւններ (ограниченія) կան ձեր այդու վրա։ Օրինակ, այդու տէրը դիցուք պարտական է մշտապէս տարեկան մի որոշ գումար նուիրել եկեղեցուն կամ մի որ և է հիմնարկութեան կամ մի մասնաւոր անձի և նրա ժառանգներին, պարտական է առանց վիճելու ճանապարհ տալ իր այդով անց ու դարձ անողներին և այլն։

3) Երրորդ սիւնի մէջ գրվում է այդու տիրոջ, այսինքն ձեր անունը, յայտնելով մի և նոյն ժամանակը թէ՝ երբ էք գնել, կամ ինչպէս էք առհասարակ ձեռք բերել այդին և այլն։ Ձեր անունը այդ սիւնի մէջ գրելը ահագին նշանակութիւն ունի ձեզ համար։ Այն բոպէից երբ ձեր անունը գրվում է այդտեղ, դուք դառնում էք այդու անվիճելի և հաստատ սեփականատէրը, մինչև որ դուք ինքներդ չը ծախէք նրան կամ մի ուրիշ կերպ չօտարացնէք (отчуждать)։ Ձեզ չէ հարկաւոր ոչ զաւալա, ոչ вводный листъ,—բաւական է միայն որ ձեր անունը գրված է, և դուք կարող էք ձեր իրաւունքը բոլորովին ապահով համարել։

4) Չորրորդ սիւնի մէջ կարգով գրվում են գրաւակալների անունները։ Դիցուք թէ ձեր այդին, որ արժէ 8000 բուբլ, հարկաւոր եղածին պէս մի քանի անգամ դուք գրաւ էք դնում զանազան կրեդիտական հիմնարկութիւններում կամ մասնաւոր փոդատէրերի մօտ։ Օրինակ, առաջին անգամ վերցնում էք մէկից 4000 բ.,—չորրորդ սիւնի մէջ առաջի տեղում գրվում է առաջին գրաւակալի անունը և ժամանակը, երբ նա տուել է ձեզ այդ գումարը։

Առանց դրան վճարելու դուք վերցնում էք մի ուրիշից 2000 բուբլ,—երկրորդ տեղում գրվում է երկրորդ գրաւակալի անունը։ Զը վճարելով այդ երկուսին դուք նորից վերցնում էք 1000 բուբլ,—երրորդ տեղում գրվում է երրորդ գրաւակալի անունը։ Այսպէս կարգով գրվում են բոլոր գրաւակալների անունները, նրանց տուած գումարները և ժամանակը։

Եթէ ձեր այդին այնպիսի լաւ դրութեան մէջ է, որ նրան միշտ 8000 բուբլի կը տան, դուք կարող էք նրան մի քանի անգամ ևս գրաւ դընել, մինչև որ բոլոր գրաւակալներից ստացած գումարը կը հասնի այդու գնին։

Եթէ դուք սնանկանում էք կամ առհասարակ անկարող էք երևում վճարելու գրաւակալներին, այն ժամանակը այդին ծախվում է աճուրդով։ Բոլոր գրաւակալները ստանում են իրանց փոդերը հերթով ով որ առաջ է տուել, նա առաջ էլ ստանում է։ Եթէ այդին ծախվում է աւելի գնով, մնացորդը յանձնվում է ձեզ, իսկ եթէ պակաս գնով, օրինակ, 6,500 բուբլով, այն ժամանակը առաջին գրաւակալը ստանում է 4000, երկրորդը 2000, իսկ երրորդը մընացած 500 բուբլ։ Նա կորցնում է 500 բուբլ։ Կը նշանակի ում ժամանակը առաջ է, նրա իրաւունքը աւելի գերադաս է համարվում։ Պէտք է նկատել որ երրորդ գրաւակալը իրաւունք չունի պահանջելու, որ դուք նրա 500 բուբլը լրացնէք ուրիշ աղբիւրներից։

Զարմանից մեծ նշանակութիւն ունի ձեզ համար, ինչպէս սեփականատիրոջ, հետևեալ հանգամանքը։ Դուք առաջին անգամ գրաւ էք դրել այդին 4000-ի, երկրորդ անգամ 2000-ի, երրորդ անգամ 1000-ի և այլն։ Դիցուք դուք մի կերպ փող էք ձեռք բերում և առաջին գրաւակալին վճարում էք։ Նրա անունը ջնջվում է գրքից։ Որովհետև նրա իրաւունքը գերադաս էր համարվում մնացած գրաւակալների իրաւունքից, դուք նրա ջնջված անուան տեղ գրում էք ձեր անունը և այդպիսով փոխադրում էք ձեզ վրա նրա իրաւունքը։ Այսպէս որ երբ այդին կը ծախվի, գոյացած գումարից ամենից առաջ դուք կը ստանաք 4000 բուբլ, յետոյ մնացածները իրանց գումարները։ Եթէ գոյացած գումարը այնքան փոքր է, որ չէ կարող բաւականութիւն տալ բոլոր գրաւակալներին, պակասողի համար դուք պատասխանատու չէք։ Դուք 4,000 բուբլ ստացել էք իբրև առաջին գրաւակալ և այդ գումարի վերաբերութեամբ վնասված գրաւակալները պահանջներ անելու ոչ մի իրաւունք չունեն։

Ահա հիպոտեկական սիստեմի համառօտ նկարագրութիւնը։

Տեսնենք հիմա ինչպէս են կատարվում զանազան գործողութիւններ անշարժ կայքերի վերաբերութեամբ։

1) Եթէ դուք ուզում էք ծախել այդին, այն ժամանակը հարկաւոր է միայն յայտնել ուր հարկն է՝—ձեր անունը երրորդ սիւնի մէջ կը ջնջեն և նրա տեղ կը գրեն գնողի անունը։ Գնողը իր անունը գրուելուց յետոյ դառնում է այդու լիակատար տէրը, մի և նոյն ժամանակը իր վրա վերցնելով այդու հետ կապված պարտականութիւնները, սահմանափակութիւնները և պարտքերը։

2) Եթէ դուք ուզում էք պարգևել մէկին ձեր այդին,—դարձեալ ձեր անուան տեղ գրվում է նրա անունը, ում պարգևում էք—ուրիշ ոչինչ։

3) Գրաւ դնել այդին, ինչպէս տեսանք, դուք կարող էք մի քանի անգամ։ Դուք յայտնում էք այս կամ այն կապիտալիստին կամ հիմնարկութեանը, որ այդու գրաւականով կամենում էք այս ինչ գումարը վերցնել։ Կապիտալիստը կամ կրեդիտական հիմնարկութեան ներկայացուցիչը գնում են այնտեղ, ուր պահվում են հիպոտեկական գրքերը։ Այդու նկարագրութիւնը կարդալով և ձեր անունը երրորդ սիւնի մէջ տեսնելով նրանք առանց կասկածելու տալիս են ձեզ այս կամ այն գումարը։ Նրանց անունները կարգով գրվում են չորրորդ սիւնի մէջ։ Ինչ կարծիք որ գրաւակալները ձեզ փող տալուց առաջ ամեն կերպ քննում են այն հարցը, թէ այդու գինը կարող է արդեօք ապահովացնել իրանց գումարները թէ չէ։

Սրանով մենք վերջացնում ենք մեր յօդուածը։ Ցոյս ունենք որ սրանից յարգելի հասարակութիւնը կարող է մի թեթև հասկացողութիւն կազմել մոցնելի սիստեմի վրա։ Երբ այս վերջինը կընդունվի բոլորովին և կը յայտնվեն մանրամասնութիւնները, մենք խոստանում ենք ընդարձակ կերպով հաղորդել «Մշակի» ընթերցողներին։

Մոսկվա Ս. Դաղեանց

րեք ժամին հանդիսականները ուրախ ուրախ ցրվեցան իրանց տները, տանելով հետերը քաղցրագոյն յիշատակ կովկասեան երեկոյի մասին։

Խ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՆԱՄԱԿ ԶԱՌԱԹԱԼԻՑ

30 յունվարի

Ես ինքս կարդալով «Մշակի» 80 թիվ համարներում մեր սովատանջ եղբարց վիճակը մտաղրվեցայ մի հանգանակութիւն բանալ յօգուտ Հայաստանի սովատանջներին։ Բայց աւաղ, որ իմ ցանկացածի պէս չը յաջողվեցաւ։ Ես առաջարկելով զաքաթալցի պարոններին, նրանք ուրախ ուրախ մտանում էին, ասելով, «թէ լաւարիա կամ քեփի բան կայ՝ բերէք ձեռ քաշեմ, բայց իմանալով բանի էութիւնը, բոլորը յետ յետ քաշվելով հեռացան։ Եւ այդպիսով, ում առաջարկեցի, մերժեց, ասելով «բան չունեմ»։

Բայց միայն գտնվեցան մի քանի առատաձեռն պարոնայք, որոնք չը խնայեցին իրանց լուման նուիրել մեր սովատանջ եղբարց։

Եւ խնդրում ենք տպագրել նուիրատուաց անունները ձեր յարգելի լրագրի էջերից մինում։ Իսկ ժողովաց գումարը ուղարկել պատկանելոյն։

Գեոնդ Խաչումեանց 1 ր., Մաթէոս Մաքիեանց 1 ր., Գէորգ Օհանջանեանց 1 ր., Յովհաննէս Օհանջանեանց 1 ր., Շահիեանց 3 ր., Հայոմն 1 ր., Կարապետ Տէր Կարապետեանց 40 կ., Յովհաննէս Մելիք Մարգարեանց 50 կ., Ալէքսան Յովհաննիսեանց 1 ր., Բրիսաափոր Տէր Մարկոսեանց 1 ր., Մինաս Նազարեթեանց 1 ր., Սարգիս Ստեփանեանց 1 ր., Գասպար Մարգարեանց 1 ր., Մկրտիչ Ստեփանեանց 20 կ., Հայրապետ Մելքումեանց 1 ր., Ստեփան Գէորգեանց 1 ր., Բէկլար Հայրապետեանց 1 ր., Բաղտասար Ամիրեանց 40 կ., Աղաբէկ Աղասանդեանց 1 ր., Պարոն Մելքում Թումիեան Ներքին-աքուլեցի 10 կ.։

Ուրեմն ընդամենն է 18 ր. 60 կ., փոստայի ծախքը դուրս եկած մնում է 18 ր. 30 կ.։

Խաչատուր Շահեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Այսօր խօսակցութիւն ունէի Վասիլի Իվանովիչ Նեմիրովիչ—Դանչենկոի հետ, որ յայտնի է ռուսաց գրականութեան մէջ իր տաղանդաւոր ճանապարհորդական նկարագրութիւններով, վիպասանութիւններով և վերջին ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ իր նամակագրութիւններով պատերազմի դաշտից։ Մեր խօսակցութեան նիւթը իմ հարցն էր նրան՝ արդեօք կը համաձայնվի նա, եթէ ապահովել նրա ճանապարհի ծախսը, գնալ Հայաստան, այնտեղից նամակագրութիւններ անելու լրագիրներում, ռուս հասարակութեանը թիւրքաբնակ հայերի վիճակի հետ ծանօթացնելու նպատակով։—Հայաստան գնալը իմ վաղեմի մտաքս է, բայց մինչև այժմ չեմ կարողանում իրագործել, ցաւելով պատասխանեց Վասիլի Իվանովիչ, և եթէ, ինչպէս ասում էք, հայ հասարակութիւնը ապահովէր իմ ճանապարհի ծախսը, ես հէնց վաղը ճանապարհ կընկնէի։ Իմ նամակներս, աւելացրեց նա, կարելի կը լիներ թարգմանել և անգլիական լրագիրներին համար։»—Մէկ այսպիսի տաղանդաւոր գրողին, աւելացնում է մեր Ս. Պետերբուրգի թղթակիցը, Հայաստան ուղարկելու համար բաւական են 1200 ազգասէր հայեր, որոնցից ամեն մէկը համաձայնվէր տալ տարեկան 5 բուբլի։ Թէ ինչ օգուտ կարող էր բերել Հայաստանին այսպիսի գրող, ինչպէս Նեմիրովիչ—Դանչենկո, բաւական է մտաբերել «Daily News» լրագրի սեփական թղթակցին, հանգուցեալ Ֆոբսին, և սրա բերած օգուտը Բոլղարիային։»

—

Բժիշկ Նաւասարդեան խնդրում է մեզ յայտնել որ վաղը, կիրակի օր, փետրվարի 8-ին, լինելու է Արծրունու թատրոնում, առաւօտեան ժամը 11-ին, չորրորդ ժողով «Բարեգործական» ընկերութեան ծրագիրը քննելու համար։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են որ յունվարի 31-ին այդտեղից ոչ հեռու արքունական ճանապարհի մօտ առւտրական խանութների շարքում հրդեհ պատահելով, այրվեցաւ հացթուխի շինութիւնը։ Ասում են որ հրդեհը առաջացել է հացթուխի վառարանից։ Ժողովուրդը օգնութիւն խնդրեց այդտեղի Լենքօրանեան գունդից, բայց գնդապետը պատասխանեց որ դա զինուորների գործը չէ։ Ժողովուրդը իր ոյժերով հազիւ կարողացաւ հանգցնել հրդեհը և ազատել կրակից մօտակայ շինութիւնները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ Փետրվարի 1-ին իշխան Բիսմարկ տուեց իր քաղաքական երեկոները։ Այդպիսի երեկոներ իշխան Բիսմարկ երբեմն երբեմն կազմում է և մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ յայտնում է իր կարծիքները այս կամ այն քաղաքական հարցի մասին, մեկնում է իր դիտաւորութիւնները, որոնք անհասկանալի են լինում։ Այնուհետև նրա խօսակցութիւնները տպվում են և տարածվում են ամբողջ Գերմանիայի և Եւրոպայի մէջ։ Այս անգամ երեկոն առանձին նպատակ ունէր և կազմված էր նորերում հիմնած ազատական խորհուրդի համար, որի անդամները բոլորն էլ ներկայ էին, իսկ մնացած հիւրերը կանչված էին իսկապէս զարդի համար։ Ասում են, որ մի ինքնուրոյն տպաւորութիւն էին գործում խորհուրդի բանաւոր անդամները, որոնք իրանց շատ լաւ էին պահում։ Ժողովուրդի չորրորդ դասակարգի անդամները, բանաւորները, առաջին անգամ մտնում էին միւս դասակարգերի շարքը, որոնցից ոչ մէկը չը համարձակվեցաւ ծաղրել նրանց կամ առանց յարգանքի վերաբերվել։ Երեկոյի վերջանալու ժամանակ բանաւորներից մէկը իր ընկերների կողմից շնորհակալութիւն յայտնեց իշխան Բիսմարկին այդ երեկոն կազմելու համար, որ բանաւորներին առաջին անգամ միջոց տուեց մերձենալ Գերմանիա ստեղծող իշխան Բիսմարկին։ «Այդ օրը, ասաց նա, անմոռանալի կը մնայ գերմանական բանաւորների մէջ։» Եւ նա իրաւացի էր խօսում։ Իշխան Բիսմարկ խորամանկութիւն գործեց և շատ լաւ տպաւորութիւն ունեցաւ Բերլինի բոլոր բանաւորների վրա։

Իշխան Բիսմարկի խօսակցութիւնը աւելի շատ ճաւի էր նմանում, որովհետև նա երկար խօսում էր և նրան ժամանակ առ ժամանակ միայն ընդհատում էին։ Իշխանը գլխաւորապէս խօսում էր տնտեսական խորհուրդի մասին։ Նա մի քանի անգամ կրկնեց, որ խորհուրդի անդամները գործնական մարդիկ են և նա վերջապէս միջոց կունենայ գործնական խորհուրդներ ստանալ իրան զբաղեցնող հարցի վերաբերութեամբ։ Իշխան Բիսմարկ չէ սիրում անդադար գնալ պարլամենտ, որովհետև նա այնտեղ գործնական քննութիւններ չէ լսում, որքան անձնական յայտարարութիւնները։ Առհասարակ Բիսմարկ յարձակվում էր պարլամենտի անդամների վրա և այդ հանդամանքը պարլամենտի բոլոր կուսակցութիւնների վրա շատ վատ տպաւորութիւն գործեց։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական համայնքների ժողովի փետրվարի 2-ի նիստին պատահած անցքերը, որի մասին մենք տեղեկութիւն տուինք ընթերցողներին, զանազան կուսակցութիւնների և լրագիրների քննութեան առարկայ են դարձել։ Թէ Լոնդոնի և թէ նահանգների բոլոր լրագիրները հաւատացնում են, որ սպիկեր կամայականութեամբ ընդհատելով վիճաբանութիւնները, խանգարեց սովորական կանոնները։ Որովհետև սպիկեր իր վճիռը կայացրեց առաջուց համաձայնելով գլխաւոր կուսակցութիւնների առաջնորդների հետ, նա հաւատացած էր, որ ժողովի հաւանութիւնը կը ստանար։ Լրագիրները նոյնպէս միաձայն կարծիքներ են յայտնում Գլադստոնի առաջարկութեան մասին։ Այդ առաջարկութիւնը, լրագիրների կարծիքով, չի ընդունվի պարլամենտի կողմից, որովհետև նա դիկտատորական իշխանութիւն է տալիս սպիկերին։ Այդ հարցի քննութեան ժամանակ Գլադստոնին կընդդիմադրեն ոչ թէ միայն իրլանդացիք, արմատականներ և պահպանողականներ, այլ նոյն իսկ նրա կողմնակիցներից էլ շատերը։ Փետրվարի 3-ին պահպանողականները այդ հարցի մասին խորհրդակցում էին լորդ Բիկոնսֆիլդի մօտ, իսկ իրլանդացի պատգամաւորները Պարնելի մօտ։

Փետրվարի 3-ին համայնքների ժողովի մէջ հետեւեալ անցքերը պատահեցան։ Պարնել կառավարութեանը հարց առաջարկեց Դավիտսին կալանաւորելու մասին։ Կառավարութիւնը պատասխան չը տուեց։ Երբ Գլադստոն սկսեց խօսել, իրլանդացի Դիլլոն ընդհատեց նրան և պահանջեց սպիկերից, որ Գլադստոնին կարգի հրաւիրէ։ Սպիկեր իրան Դիլլոնին կարգի հրաւիրեց և այնուհետև 395 ձայների մեծամասնութեամբ վճռվեցաւ Դիլլոնին հեռացնել ժողովից։ Դիլլոն չը հպատակվեցաւ այդ վճռին և նրա դէմ ոյժ գործ դրին։ Այնուհետև ժողովի վճռի համեմատ դահլիճից հեռացրին 30 իրլանդացի պատգամաւորներին։ Այնուհետև սկսվեցաւ Գլադստոնի առաջարկութեան քննութիւնը, որ ընդունվեցաւ անենշան փոփոխութիւններով ժողովի ահագին մեծամասնութիւնից։

ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Փետրվարի 3-ին համայնքների ժողովից հեռացրած իրլանդական պատգամաւորները խորհրդակցեցին և վճռեցին դիմել իրլանդացիներին մի յայտարարութեամբ, որի մէջ ասված է, որ Դավիտսի կալանաւորելը և իրլանդական պատգամաւորներին ժողովից հեռացնելը կարող են առիթ տալ իրլանդացիներին վտանգաւոր ընթացք բռնել և որ պատգամաւորները հարկաւոր են համարում զգուշացնել իրանց ընտրողներին այդպիսի գործերի դէմ։ Պատգամաւորները խորհուրդ են տալիս ժողովուրդին չը դուրս գալ սահմանադրական և խաղաղ ցոյցերի սահմաններից։ Պատգամաւորները օրինակ են ցոյց տալիս ժողովուրդին, հանգստութեամբ տանելով նրանց վրա գործած բռնութիւնը, շարունակելով մնալ ժողովի անդամներ և կատարել իրանց պարտականութիւնները։ Այդ յայտարարութիւնը ստորագրել է Պարնել իրլանդական բոլոր պատգամաւորների կողմից և ուղղած է իրլանդական ամբողջ ժողովուրդին։

Հարկաւոր ենք համարում նկատել, որ Դավիտս իրլանդական կալուածական միութեան հիմնադիր է։ Արձակված լինելով բանտից, նա նորից կալանաւորվեցաւ, որովհետև չը կատարեց այն պայմանները, որոնցով արձակված էր։

ԹԻՐՔԻԱ

Լանինայից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են, որ Զակի-փաշա հրաման ստացաւ Կ. Պոլսից՝ բնակարաններ պատրաստել 15 բատալիոն հետեւակ զօրքերի համար թւով 7,500 մարդ, որոնք Սկուտարիից պետք է ուղևորվեն Եանինա։ Բնակարանների պակասութեան պատճառով Զակի-փաշա հիմնեց մի մասնաժողով թիւրք, քրիստոնեայ և հրէայ անդամներով և յանձնեց նրան բնակարաններ պատրաստել այդ զօրքերի համար։ Թէսալիայում և Էպիրոսում լուր է տարածվել, իբր թէ Բ. Դուռը, ֆինանսական դժուարութիւնների առաջն առնելու համար մտադիր է երկու տարվայ հարկը միասին սկզբից ժողովել։

„Իէյտերի“ ընկերութիւնը հեռագրում են Կ. Պոլսից. Բ. Դուռը շարունակ պատերազմական պատրաստութիւններ է տեսնում ի նկատի ունենալով Յունաստանի հետ պատերազմի սկսվելու կարելութիւնը։ Բ. Դուռը անդադար դիմում է Կ. Պոլսի բանկիրներին նոր փոխառութիւն անելու համար, բայց նրանք ապահովութիւն են պահանջում Էպիրոսից և Թէսալիայից ստացված լուրերից երևում է, որ թիւրքաց զօրքերը շատ վատ դրութեան մէջ են. նրանց կերակուրը վատ է և անկանոն է բաժանվում և բացի այդ զինուորները լաւ հագուստ չունեն։ Կ. Պոլսից հաղորդում են լրագիրներին, որ Բ. Դուռը մտադիր է մի քանի բատալիոն զօրք ուղարկել Սալոնիկի, որտեղ կուղևորվի նոյնպէս և Դերվիշ-փաշա։ Այդ զօրքերը լաւ զինուորված կը լինեն, և բաւական շատ պատերազմական պաշարներ կունենան։

ՆԱՄԱԿ ԹԻՒԻՐԻԱՑԻՑ

Վան, 3 դեկտ. 80

Երկու ամիսի չափ կայ որ հայոց կլուբ հաստատված է այստեղ ուր երեկոյներ հաւաքվելով լրագիրներ կը կարդան և ազգային երգեր կերգեն։

Գաւառային ընդհանուր ժողովը սկսած է յաճախ նիստեր անել և պատրիարքական փոխանորդ Դեր. Գարեգին վարդապետ մեծ եռանդ և գործունէութիւն ցոյց կը տայ։ Հայոց գատերը և վէճերը ընդհանրապէս մեր առաջնորդարանը կը տեսնէ այժմ. փոխանակ կառավարութեան դատարաններուն, մեր առաջնորդարան կը դիմեն Գարեգին վարդապետին։ Ընդհ. ժողովը պիւդժէի խնդիրը կարգադրելով զբաղած է. դատաստանութեան գործին ալ մի կարևոր բաժին պիտի տրվի պիւդժէին մէջ։

Պ. Կամսարական դեռ չէ վերադարձած Մուշէն։ Թէ ինչ պատճառով նա Մուշ մնաց արդէն հրատարակած տեսանք «Մշակի» մէջ։ Լուր տարածուած է թէ Կամսարական Վան պիտի թողու և Երզրում պիտի երթայ ընդհ. հիւպատոսի պաշտօնով։ Այս որչափ ալ տրախտալի լինի, վանցիներուն տխրութիւն պատճառեց որ պիտի բաժնուին պ. Կամսարականէն, որ ամեն կարգի հայոց սիրելի և յարգելի եղած է։ Կը մտածեն ոմանք որ հանրագիր մը ղրկեն Ցփղիս և Կովկասի փոխարքայէն խնդրեն որ պ. Կամսարական այստեղ մնայ, իրեն աւելի բարձր մի պաշտօն տրուելով։

Այստեղ ամեն մարդ անհամբեր կը սպասէ դարուն դի ընդհանուր կարծիք կայ թէ դարուն կարգը պիտի դայ հայոց խնդիրը լուծելու։

Սովը գրեթէ վերջացած է, բայց թանգութիւն և աղքատութիւն կը տիրեն։ Արմտիք լաւ կերուին այս տարի։

Խրիմեան հայրիկ առաջնորդական պաշտօնը թողած, ընդհանրական գործերով կը զբաղի։ Նա առ երևոյթս ոչինչ պաշտօն չունի այստեղ, բայց ամեն բանի համար կաշխատի իբր վերադիտող այստեղ կատարուելիք գործերուն։ Վանցի ազգայիններ որ երբէմն պօղոսեան, ապօղոսեան կուսակցութեան բաժնուած կը կռուէին միշտ, այժմ միաբանած սիրով են։

* * *

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր., երկրորդ 222 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 7 ր. 76 կ.։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 բուբլ համբուրգի վրա արժէ 215 մարկ, փարիզի վրա 266 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

ԼՈՆԴՈՆ 5 փետրվարի։ Անգլիական բանկի դիսկոնտը 3%։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ